

## ԱՐԵՎՍՏԱՅԱՑԵՐՆԻ ԱՐՏԱՅՈՒՄԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԲԱՅԱՏՐՈՎԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

### Ո. Կ. ՍԱԶԱՊԵՏՈՅԱՆ

Արդի հայերենի բառապաշարը ըստ զարգացման տարբեր փուլերի դասակարգելիս սովորաբար առանձնացվում է արևմտահայերեն բառաշերտը: Տարբեր հեղինակներ յուրովի են գծում արևմտահայերեն համարվող բառաշերտի սահմանները, որ հետևանք է տարբեր մոտեցումների: Հիմնական տարբերությունները պայմանավորված են խնդրին անդրադառնալու մեթոդների ընտրությամբ. պատմական՝ տարժամանակյա մոտեցման դեպքում ստացվում է այլ պատկեր, քան համաժամանակյա մոտեցման դեպքում: Պատճառն այն է, որ հայերենի երկու տարբերակները, գտնվելով սերտ առնչությունների մեջ և փոխադարձաբար ազդելով միմյանց վրա, հաճախ ջնջում են նախապես եղած սահմանները. արևմտահայերենում ստեղծված և լայն տարածում ունեցող բառերը սկսում են գործածվել նաև արևելահայերենում, և՛ հակառակը: Սակայն ընդհանուր առմամբ բնական և խրախուսելի այս երևույթը դժվարացնում է բառի տարածքային պատկանելության ճշտումը, լեզվի զարգացման ընթացքի և միտումների բացահայտումը, եթե ամրագրենք սոսկ առկա վիճակը, դիտարկենք միայն հետևանքները՝ առանց խորանալու պատճառների մեջ: Ուստի մենք առաջնորդվում ենք տարժամանակյա մոտեցմամբ. քանի որ միայն այս դեպքում է հնարավոր դառնում հստակորեն զանազանել հայերենի երկու տարբերակների բառապաշարների էական առանձնահատկությունները և ճշտել դրանց հետագա փոխհարստացման ուղիները:

Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային տարբերություններին առաջինը անդրադարձել է Հր. Աճառյանը: Նա իր «Հայոց լեզվի պատմություն» երկրորդ հատորի ԻԹ գլխում («Գրապայքար, վերամշակումներ և միության փորձեր»), առանձնացնում է մի ենթաբաժին, ուր «Բառամթերքի տարբերություններ» վերնագրի տակ նշում է այն հիմնական բառախմբերը, որոնք ձևախմաստային որևէ հատկանիշով տարբերվում են արևելահայերենում և արևմտահայերենում. այսինքն՝ քննում է արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային տարբերությունները<sup>1</sup>: Ծավալով փոքր, սակայն տարողունակ այս դիտարկման մեջ Հր. Աճառյանը փաստորեն սահմանում է «արևմտահայերենի բառապաշար» հասկացությունը: Հայերենի նորագույն բառարանները, որոնք հավակնում են ընդգրկել հայերենի ողջ ակտիվ և պասիվ բառապաշարը, միայն պայմանականորեն կարելի է «նորագույն» անվանել, քանի որ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» (այսուհետև ԱՀԲԲ) հրատարակվել է 1976 թ., իսկ ԳԱ Լեզվի ինստիտուտի հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» չորս հատորները (այսուհետև ԺՀԲԲ) լույս են տեսել 1969-80 թթ: Այլ կերպ ասած՝ հիշյալ բառարանների հրատարակությունից անցել է շուրջ քառորդ դար: Հիշյալ երկու բառարաններում էլ ընդգրկված է համարյա միևնույն բառապաշարը. այդ մասին վկայում է Էդ. Աղայանը՝ գրելով, որ բառարանի կազմության ընթացքում ԺՀԲԲ-ի հետ կատարվել է բառամթերքի համեմատություն, և փոխադարձաբար լրացվել են երկու բառարաններն էլ. «... Երբ լույս տեսավ առաջին հատորը և դրա ու մեր բառարանի համապատասխան հատվածի բառացանկերի

<sup>1</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Բ. II, Եր., 1951, էջ 562:

մեր համեմատությունը երևան քերեց այնպիսի տարբերություններ, որոնք չէր կարելի հաշվի չառնել, բառարանի հաջորդ հատորների կազմողների համաձայնությամբ փոխադարձաբար համեմատեցինք երկու բառարանների բառացանկերը և փոխադարձաբար համալրեցինք... Այդ համեմատությունն զգալիորեն նպաստել է մեր բառարանի հարստացմանը և բառացանկի հարստացմանը այնպիսի բառերով, որոնց բացակայությունը կարելի կլիներ թերություն համարել: Կարծում ենք, որ մեր բառարանն էլ ինչ-որ չափով պետք է նպաստած լինի քառահատոր բառարանի բառացանկի համալրմանը»<sup>2</sup>:

Ինչ խոսք, բառահոդվածների մշակման, բառերի նրբիմաստների ընդգրկման տեսակետից ԱՀԲԲ-ն հայ բառարանագրության մեջ մի նոր և բարձր աստիճան է ներկայացնում:

Պրոֆ. Ա. Սուքիասյանը, արժևորելով այդ բառարանը, գրում է. «Գիտական բարձր մակարդակով են կատարված բառահոդվածի կազմությունը, համանունների առանձնացումը, գլխաբառին տրվող քերականական և ոճական այլևայլ նշումները, բառիմաստների տարբերակումն ու դասակարգումը, տարբերակված իմաստների բացատրությունը, զանազան սահմանումները, իմաստները հաստատող բնագրային որոշ օրինակների տեղադրումը»<sup>3</sup>:

Բառարանի ընդարձակ առաջաբանում ոչ միայն տրվում և հիմնավորվում են բառարանի կազմության սկզբունքները, այլև վեր են հանվում և իրենց լուծումն են ստանում բառագիտությանը և բառարանագրությանն առնչվող բազմաթիվ սկզբունքային հարցեր: Առանձնապես կարևոր ենք համարում մի քանի տերմինների ճշգրտումները, որոնք էական նշանակություն ունեն բառարանագրության համար: «Արդի հայերեն ասելով հասկանում ենք աշխարհաբար կամ նոր հայերեն գրական լեզուն իր երկու գրական տարբերակներով, որոնք մեր ազգային գրական լեզվի գոյության երկու ձևերն են: Այդ տարբերակներից մեկը՝ արևելահայերենը, Հայաստանում սովետական իշխանության հաստատման ու պետականության ստեղծման շնորհիվ աննախընթաց կերպով ընդարձակեց իր գործառությունները, բարձրանալով պետական լեզվի աստիճանին և զարգանալով դեպի համազգային լեզվի բարձունքը: Այս բնութագրությամբ «արդի հայերեն» անվանումը տարբերակվում է «ժամանակակից հայերեն» տերմինից, որով մեզ մոտ անվանում են մեր գրական և խոսակցական լեզուներից (ազգային լեզվի տարբերակներից) միայն մեկը՝ արևելահայերենը»<sup>4</sup>:

Այսպիսով, Էդ. Աղայանը հստակորեն տարբերակում է արդի հայերեն և ժամանակակից հայերեն տերմինները՝ առաջինի համար նկատի ունենալով հայերենի երկու գոյաձևերը (արևելահայերեն և արևմտահայերեն), իսկ երկրորդը գործածելով միայն արևելահայերենի համար: Ցավոք, այս կարևոր տարբերակումը ոչ միշտ է գործադրվում լեզվաբանների կողմից, որը և առիթ է տալիս տարբեր թուրքմբռնումների: Այսպես, ԺՀԲԲ-ի առաջաբանում կարդում ենք. «Սույն բառարանը, որ ընդգրկում է ժամանակակից գրական հայերենի արևելահայ, ինչպես նաև արևմտահայ ճյուղերի բառապաշարն ու դարձվածքները, այդ պահանջը բավարարելու առաջին փորձն է»<sup>5</sup>: Այս բառարանի հեղինակները ակնհայտորեն նկատի չեն ունեցել հիշյալ տերմինային տարբերակվածության հնարավորությունը, թեև, ինչպես տեսանք, հավակնում են բառարանում արտացոլել հայերենի երկու տարբերակների բառապաշարը:

<sup>2</sup> Էդ. Աղայան, ԱՀԲԲ, Եր., 1976, էջ VI:

<sup>3</sup> Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, էջ 419:

<sup>4</sup> Էդ. Աղայան, ԱՀԲԲ, էջ VII-VIII:

<sup>5</sup> ԺՀԲԲ, էջ V:

Երկու բառարաններն էլ արևմտահայերեն բառերը տարբերակում են հատուկ նշումով: ԱՀԲԲ-ի առաջաբանում կարդում ենք. «6. Արևմտ. նշումը ցույց է տալիս, որ բառը արևմտահայ լեզվին է պատկանում և արևելահայերենում բոլորովին չի գործածվում կամ գործածվում է փոխառաբար (օր. ձայնասփյուռ, խոսնակ, հրասայլ ևն)»<sup>6</sup>:

ԺՀԲԲ-ն ևս ունի նույն մոտեցումը. «5. Միայն արևմտահայերենում գործածվող բառերի կողքին փակագծերի մեջ դրվում է արևմտհ. նշումը»<sup>7</sup>:

Այսպիսով, պարզ է դառնում, որ երկու բառարաններն էլ արտացոլում են միայն արևմտահայերենին բնորոշ, արևելահայերենում չգործածվող բառերը: Մինչդեռ բաց է մնում մի շարք այլ բառախմբերի (առավելաբար արևմտահայերենում գործածվող, գրաբարյան բառի գործածություն միայն արևմտահայերենում, նորակազմություններ, հնչյունափոխական տարբերակներ և այլն) բառարանում ընդգրկելու հարցը: Բացի այդ, սկզբունքային մոտեցում է պահանջում արևելահայերեն-արևմտահայերեն բառային փոխներթափանցումների արտացոլման խնդիրը: Հենց էդ. Աղայանի բերած օրինակները (ձայնասփյուռ, խոսնակ, հրասայլ) նման մոտեցման դեպքում դժվար է համարել արևմտահայերեն, քանի որ դրանք այսօր լայնորեն կիրառվում են նաև արևելահայերենում: Ուրեմն հարցը պետք է դիտարկել ոչ թե համաժամանակյա, այլ տարժամանակյա կտրվածքով՝ ցույց տալու համար բառապաշարի տեղաշարժերը: Ինչ խոսք, նման տարբերակման նպատակը ոչ թե արևելահայ-արևմտահայ տարբերությունների ցուցահանումն է, այլ ընդհանուր հայերեն բառապաշարի մեջ դրանցից յուրաքանչյուրի բերած ներդրումը ճիշտ արժևորելը:

Այդ առումով հիշյալ երկու բառարանների դիտարկումը ի հայտ է բերում ուշագրավ փաստեր:

1. Երկու բառարաններն էլ համապատասխան նշումով տեղ են տվել զուտ արևմտահայերեն մի շարք բառերի ու բառաձևերի: Օրինակներ ԱՀԲԲ-ից. Ախոյան - 3. չեմպիոն, 4. համախոհ, կողմնակից, պաշտպան, 6. մարտիկ, մի բանի համար մարտնչող մարդ, Անել<sup>2</sup> - 5. փակուղի\*, Անուշ<sup>1</sup> - 6. լիմոնադ, Գետին - 6. հիմք, հիմունք, հող, Գոց - 1. Փակ, 2. Փականք, 3. փխբ. Ամպամած, 4. Անգիր, 5. Մուգ գույնի, Ենթակայական - 4. սուբյեկտիվ, էն<sup>2</sup> - կազմում է գերադրականի ձև՝ ամենա, ամենից նշ., Թուրցիկ<sup>2</sup> - 6. թեթևաբարո, թեթևսուլիկ, Լոլիկ-պոմիդոր, Կառք - 4. ավտոմոբիլ, Կարգել - 4. ամուսնացնել, Հող<sup>2</sup> - այդտեղ, Զգել - 26. թողնել, թույլ տալ, Հակակշիռ - 5. հսկողություն, Հանուն - 3. մեկի անունից, որպես ներկայացուցիչ, Մականուն - 2. ազգանուն, Շահել - 4. ապրուստի միջոցներ հայթայթել, Պահ<sup>2</sup> - 6. դասաժամ, Պապա - 2. հասակավոր, մեծ (պետք է լիներ հարգարժան, պատկառելի - Ի. Ա.), Պապուկ - 4. պապիկ, Պաստառ - 6. էկրան, Սուղ - 4. թանկ, Տղա - 2. ընդհանրապես երեխա՝ մանչ թե աղջիկ, Փոխադրական - 4. տարափոխիկ, վարակիչ, Քանակ<sup>2</sup> - քանոն, և այլն:

ԺՀԲԲ-ում նման բառերը ունեն արևմտհ. նշումը և ոչ միշտ են համընկնում ԱՀԲԲ-ի յովյալների հետ, օր. Առնուլ-առնել, Գրագետ - 5. Գրականությամբ զբաղվող, գրող, գրականագետ, Ընդծովյա - 2. սուզանավ, Կառք - ավտոմեքենա, Հոս-այստեղ, Մարելիք-մարեմբելը, ուշաթափություն, Շիտակը - ճիշտն ասած, իհարկե, Տղա - 2. ընդհանրապես երեխա՝ մանչ թե աղջիկ, Փոխադրական - 4. վարակիչ, տարափոխիկ, Քանակ<sup>2</sup> - քանոն, և այլն:

ԺՀԲԲ-ն երբեմն գործածում է նաև առավ. արևմտհ. կամ մեծ մասամբ արևմտահայ գործածությամբ նշումները, որ երբեմն տարակուսանք են առաջաց-

<sup>6</sup> ԱՀԲԲ, էջ XV:

<sup>7</sup> ԺՀԲԲ, էջ VII:

\* Գլխաբառից հետո թիվը ցույց է տալիս տվյալ բառիմաստի հաջորդական թվահանարը:

նում: Այսպես, լաթ բառն ունի մեծ մասամբ արևմտահայ գործածությանը նշումը, ուր հաջորդաբար բերվում են հետևյալ իմաստները. 1. Կտոր, կերպաս, 2. Ջգեստ, հագուստ, 3. Քուրջ, փոշելաթ, ջնջոց, 4. Անկողիճ, տեղաշոր, 5. Կաշեման կտոր, որով երբեմն կազմում են գրքերը..., 6. Օորի ծվեն, պատառ, 7. Մաշված՝ պատառուոված ցնցոտի:

Այստեղ ակնհայտորեն իրար են խառնված բառի արևելահայ և արևմտահայ իմաստները: Միանշանակորեն կտոր, զգեստ, շոր իմաստները հատուկ են միայն արևմտահայերենին. արևելահայերենում բառն ունի քուրջ, ջնջոց, ցնցոտի, մոմ-լաթ (գիրք կազմելու) իմաստները:

**Փոց** բառը տրվում է առավ. արևմտի. նշումով, որի նշված չորս իմաստներից և ոչ մեկը (կողպված, ծածկված, գործունեությունը դադարեցրած, աճգիր) բնորոշ չէ արևելահայերենին: Պատահական չէ, որ բերված բնագրային բոլոր օրինակները արևմտահայերենից են:

**Մականուն** բառի ազգանուն իմաստը ևս ունի առավ. արևմտի. նշումը, մինչդեռ նման իմաստ այս բառը արևելահայերենում չունի. այն նշանակում է ավել ա-նուն:

**Ձանձրույթ, ձանձրություն** բառերով կազմված հարադրությունները ԺՀԲԲ-ն սխալ է բացատրում. **Ձանձրություն** առնել (արևմտի.) - ձանձրանալ: Թող ձանձրություն չառնե մինչև հոս գալու (ԼԲ):

Բնագրային օրինակն իսկ հուշում է, որ այս արտահայտությունը արևմտահայերենում ոչ թե նշանակում է ձանձրանալ, այլ նեղություն քաշել: Միշտ նույն ձևով ձանձրություն տալ նշանակում է նեղություն տալ և ոչ թե ձանձրացնել, ինչպես բացատրում է ԺՀԲԲ-ն: Ասվածները հավասարապես վերաբերում են ձանձրույթ բաղադրիչով հարադրություններին:

2. Երկու բառարաններում էլ զգալի թիվ են կազմում այն արևմտահայերեն բառերը կամ բառերի առանձին իմաստները, որոնք բերվում են առանց արևմտ. նշումի, որ նշանակում է, թե բառարանները դրանք գործածական են համարում նաև արևելահայերենում: Բերենք նման բառերի օրինակներ ԱՀԲԲ-ից. Անուշ<sup>1</sup> - 5. Անուշեղեն, 7. Մուրաբա, Գիտելիք - 2. Տեղեկություն, Մեղք-ափսոս (տրվում է իբրև մեղք լինել դարձվածքի 2-րդ իմաստ, - Ռ. Ս.), Լաթ - 3. զգեստ, հագուստ, Հով - 5. Թեթև, զով քամի, Շառ<sup>1</sup> - Կարմիր, շառագույն, Ընկերային - 2. Հասարակական, Թելադրություն - 7. Սադրանք, հրահրում, Խոնարհություն - 3. Գլուխ խոնարհելը որպես հարգանքի արտահայտություն. Խոնարհություն աճել (ընել) - հարգանքով գլուխը իջեցնել\*\*։ Ձեռնարկ - 2. ձեռնարկություն, Ձեռնարկություն - 4. Միջոցառում, Հույզ<sup>2</sup> - 1. Բույսերի հյութը, 2. Ջրի մեջ լուծված խեծ, Մորթ<sup>1</sup> - 1. մաշկ, Անավաղ<sup>1</sup> - ոչինչ չկերած, բերանը ոչինչ չդրած, Ջանգել<sup>1</sup> - 1. խմորը հում-ցել, շաղել, շաղախել: 2. Խառնել, միավորել, միաձուլել, Անգար<sup>1</sup> - գլխի կեսում զգացվող ցավ, միզրեն, շեկեկ, Կարգ - 3. հերթ, Նիշ<sup>1</sup> - 4. մարզական և այլ կարգի մրցությունների մեջ մրցակիցների շահած միավոր, Որոշ - 1. պարզ, որոշակի, Հայտնություն - 4. Հայտնագործություն, Սառ - 20. սառույց\*\*\*, Քարափ - 2. նավահանգիստ (պետք է լինի նավամատույց կամ կառամատույց), Տղայություն - 3. երեխայական հասակին՝ երեխային հատուկ արարք, երեխայություն, 4. անփորձ՝ միամիտ՝ անխոհեմ գործ՝ արարք:

Բերենք արևմտահայերեն բառերի օրինակներ, որոնք առանց որևէ նշման հանդիպում են ԺՀԲԲ-ում:

\*\* Փակագծում բերված ընել ձևն արդեն իսկ հուշում է, որ արտահայտությունը բնորոշ է արևմտահայերենին:

\*\*\* Այս բառի սխալ բացատրության մասին տես մեր հոդվածում, ԲԵՀ, 2003, № 1, էջ 60:

**Անուշ** - 5. մուրաբա, **Պապա** - 2. Հարգարժան, մեծ, **Լող<sup>2</sup>** - հողածածկ տանիքները գլորելով հարթեցնելու և ամրացնելու ծանր գլանաձև քար, **Մրար** - 2. կապոց, **Միայն** - 3. ինքը մենակ, առանց ուրիշի օգնության, **Շառ<sup>2</sup>** - թուխ կարմիր, արյան գույնի, շառագույն, **Շատոնց** - վաղուց, վաղուց ի վեր, **Ենթակայական** - այն, որ վերաբերում է տվյալ անձին՝ մարդուն՝ անհատին, անձնական, անհատական\*\*\*, **Ընկերային** - 2. հասարակական, սոցիալական, **Ընկերավարական**-սոցիալիստական, **Հոտել** - 2. բուրել, անուշ հոտ արձակել, **Զգել** - 6. գգել, տարածել, 10. ձեռք քաշել մի բանից, թողնել, 21. թողնել, **Տղաբերք**-ծննդաբերություն, **Տղայական** - 3. անմիտ, անփորձ, մանկամիտ, և այլն:

3. Այս խմբի մեջ ամփոփել ենք մուշներ այն բաներից, որոնց արևմտահայերեն իմաստները տեղ չեն գտել հիշյալ բառարաններում: Բառաձևը նշելուց հետո տալիս ենք այն իմաստը, որն իր արտացոլումը չի գտել ԱՀԲԲ-ում կամ ժՀԲԲ-ում:

Օրինակներ ԱՀԲԲ-ից.

**Անառակ**-չարածճի, **Ախոյանական**-չեմպիոնական, չեմպիոնատի, **Լուծում**-վերլուծություն, **Կազմած**-սարք, գործիք, **Ենթակետ**-ստորակետ, **Հանդերձյալ**-հանդերձավորված, **Մասնավոր**-դիտմամբ, **Միջոցառում**-մարզանքի կամ զինավարժության ժամանակ շարքերի բացվելը, տարածություն պահելը, **Մենատուն**-մենաստան, **Վարիչ**-վարորդ, **Վավերական**-օրինական, **Փոխանուն**-դերանուն, **Օժանդակ**-վտակ, **Նիշ**-զնահատական, **Գծել**-նկարել, **Խմել**-ծխել, **Կոխել**-կնիքը սեղմելով՝ տպել, դրամ հատել, **Տակառ**- բարել (հեղուկ և սորուն նյութերի չափման միավոր), **Փափագող**-հայցորդ, և այլն:

Օրինակներ ժՀԲԲ-ից.

**Ախոյան**-չեմպիոն, **Արկած**-վթար, **Գիտելիք**-տեղեկություն, **Գծագրիչ**-նկարիչ, **Երկրորդական**-միջնակարգ, **Հակակշիռ**-հսկողություն, **Մասնավոր**-դիտմամբ, միտումնավոր, **Միջոցառում**-միջոց առնելը՝ շարքերի բացվելը, **Մենատուն**-մենաստան, **Վարիչ**-վարորդ, **Վավերական**-օրինական, **Օժանդակ**-վտակ, **Մորթ**<sup>1</sup>-մորթի, **Հանուն**-անունից, **Առարկայական**-օբյեկտիվ, **Կողք**-կազմ, **Ձյութ**-ծամոն, **Շաքար**-կոնֆետ, **Պահ**-դասածամ, **Պաստառ**-էկրան...

4. Արևելահայերեն-արևմտահայերեն բառաձևերը բառարանում ընդգրկելու հարցում բառարանագիրների անհետևողականությունը հատկապես նկատելի է ուղղագրական-հնչյունափոխական տարբերակների ընտրության դեպքում: Միևնույն հնչյունափոխական երևույթը ներկայացնող բառաձևերի մի մասը առհասարակ ներկայացված չէ, իսկ մի մասն էլ տե՛ս նշումով հղվում է արևելահայերենի համար սովորական ձևերին: Հենց միայն պայթական բաղաձայնների տեղաշարժ-տեղափոխության հետ կապված հնչյունափոխական տարբերակները բավական են ցույց տալու համար որևէ սկզբունքի բացակայությունը այդ տարբերակների ընտրության հարցում: Այսպես, ԱՀԲԲ-ում տեղ չեն գտել հետևյալ բառաձևերը. բամպակ, բճիճ, գաղճ, գանկ, թաղանդ, լինտ, խնձոր, խոշտանկել, խորտուբորտ, հայելիապատ, պրոնգ, տարչին, տմպո, քլունկ և բազմաթիվ մնաց բառեր: Ավելացնենք մի քանի այլ օրինակներ ժՀԲԲ-ից. բարիություն, բքիջային, ռետնապատ, գտակ, թուղբ, տաղել, փափաք և այլն: Սրանով մենք երբեք չենք ուզում պնդել, որ հիշյալ բառաձևերը պետք է արտացոլվեին քննվող բառարաններում: Պարզապես բառարաններում տեղ են գտել այնպիսի բառաձևեր, որոնք համանման մոտեցման դեպքում չպետք է արտացոլվեին այս բառարաններում: Միևնույն միևնույն հնչյունափոխական երևույթին վերաբերող (այսինքն՝ արևմտահայերենին բնորոշ) բառաձևերի մի մասը տե՛ս կամ նույնն է նշումով

\*\*\* 2ի տրվում սուբյեկտիվ իմաստը, սակայն հաջորդ՝ ենթակայություն բառը տե՛ս-ով հղվում է սուբյեկտիվիզմին:

Ռեզիստանտները են արևելաֆրանսիական ձևերին: Ահա օրինակներ ԱՀԲԲ-ից. Բարիություն - տե՛ս Բարություն, Խելացություն - տե՛ս Խելացիություն, Հղանալ - 1. տե՛ս Հղիանալ, Հղացնել - տե՛ս 1. Հղիացնել, Փոշիապատ - տե՛ս Փոշեպատ, Կղզախումբ - տե՛ս Կղզեխումբ, Կղզիաբնակ - տե՛ս Կղզեբնակ, Բոպիկ - տե՛ս Բոբիկ, Գինտ - տե՛ս Գինդ, Գունտ-տե՛ս Գունտ, Գտակ - տե՛ս Գդակ, Թագնվել - տե՛ս Թաքնվել, Թագստոց - տե՛ս Թաքստոց, Թագուն - տե՛ս Թագուն, Թարբ - տե՛ս Թարբ, Թոթոշ - տե՛ս Դոդոշ, Թուղբ - տե՛ս Թուխպ, Խենդ - տե՛ս Խենթ, Մղրիթ, Մղրիտ - տե՛ս Մղրիդ, Կարկաշ - տե՛ս Կարկաշ, Հաջել - տե՛ս Հաշել, Մամբա-տե՛ս Մամբա, Մագոգ - տե՛ս Մաքոք, Տաղել<sup>2</sup> - տե՛ս Դաղել, Փափաք - տե՛ս Փափագ, Փուն - տե՛ս Փուչ...

Ընդ որում, տեղի խնայողության նպատակով նշում ենք միայն արմատական բառաձևերը՝ զանց առնելով բաղադրությունները (օր. խենդանալ, խենդություն, կարկաջահոս, հաջան և այլն):

Համանման մոտեցում է որդեգրել ժՀԲԲ-ն՝ արևմտաֆրանսիական բառաձևերը Ռեզիստանտներին: Կրկնություններից խուսափելու համար բերում ենք մի քանի նմուշ, օր. Թունել<sup>1</sup> - տե՛ս Թունավորել, Գինտ - տե՛ս Գինդ, Կարգեքեց - տե՛ս Դեկան, Փոխան-տե՛ս Փոխարեն, Սառկել - տե՛ս Սառնավուն, Քաղաքավար - տե՛ս Քաղաքավարի, և այլն:

Միշտ մոտեցման դեպքում բնականաբար անհրաժեշտ էր համապատասխան Ռեզիստանտներին հավաստել հիշյալ բառերի արևմտաֆրանսիական պատկանելը:

5. Բառարաններում զգալի թիվ են կազմում նաև հնգ. նշումով բառերը, որոնց մեջ քիչ չեն այնպիսիք, որոնք արևելաֆրանսիական դուրս են եկել գործածությունից կամ կորցրել են գրաբարյան իմաստը և ձեռք բերել նոր, աշխարհաբարյան իմաստ՝: Քննվող երկու բառարաններն էլ նման բառերը գերադասում են տալ հնգ. նշումով, մինչդեռ դրանց գործածությունը արևմտաֆրանսիական սովորական է և տարածված: Այսպես. ԱՀԲԲ-ում իբրև պաթ բառի 6-րդ իմաստ տրվում է դասաժամ բացատրությունը՝ հնգ. և արևմտ. նշումով, որ պետք է հասկանալ, թե բառը հնացած է արևմտաֆրանսիականում, մինչդեռ առ այսօր Սիլիուրում դասաժամն անվանում են պաթ: Ահա հնգ. նշումն ունեցող, բայց արևմտաֆրանսիականում գործածվող բառերի մի փոքրիկ ցանկ՝ քաղված ԱՀԲԲ-ից. Ամսական - 7. ամսական ոռնիկ, վարձատրություն, Անթել - 2. (ծող., հնգ.) - ուղիտ, Արկած - 4. աղետ, Գրագետ - 5. գրականությանը զբաղվող, գրող, գրականագետ, Ցանկ<sup>2</sup> - 1. ճյուղերից սարքած պատնեշ, ցանկապատ, Բանավոր - 3. բանական, խելացի, տրամաբանական, Ընկերություն - 8. հասարակություն, Մրար - 5. կտորի փաթեթ, թոփ (նաև՝ կապոց - Ռ. Ս.), Միանգամայն - 2. միևնույն ժամանակ, միաժամանակ, դրա հետ միասին: 3. Մի անգամ, մի նվազում, Տնտեսագետ - 3. խնայող, տնտեսող, Չուգարան - 2. զգեցարան, Համար - 10. թիվ: 11. համարանք: 12. հաշիվ, պատասխան, Համարատվություն - հաշվետվություն, Համարատու - 2. Հաշիվ տվող, հաշվետու (անձ), Պատկան - 2. պատշաճ, վայել, հարմար, Վարժարան-դպրոց, Վարժուհի-կին ուսուցիչ, ուսուցչուհի, և այլն:

Օրինակներ ժՀԲԲ-ից. Աներևույթ - 2. անորոշ դերբայ, Կազմած - 2. հանդերձանք, սարած, սարվածք, սարք, գործիք, Ցանկ<sup>1</sup> - բակերը, այգիները և այլն շրջապատող պատ, ցանկապատ, Համարակալ - 2. հաշվակալ, տոմարակալ, հաշվապահ, Տարագ - 3. կերպ, ձև, եղանակ, և այլն:

Ակնհայտ է, որ հիշյալ բառերը արևմտաֆրանսիականում ոչ միայն չեն ընկալվում որպես հնացած բառաձևեր, այլ և ունեն կիրառության ամենաբազմազան ոլորտներ:

<sup>1</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Ռ. Սաքապետոյան, Միևնույն բառաձևերի արևմտաֆրանսիական տարբեր իմաստների արևելաֆրանսիականում և արևմտաֆրանսիականում, ԲԵՀ, 2003, № 1, էջ 53:

7. Բնկվող բառարանները իրարից տարբերվում են մի կարևոր հատկանիշով. ԺՀԲԲ-ն յուրաքանչյուր բառիմաստի համար բերում է բնագրային օրինակներ, որով և բացատրվում է նրա համեմատաբար ծավալուն լինելը: ԱՀԲԲ-ն բնագրային օրինակների դիմում է խիստ հազվադեպ, երբ դժվար է լինում բառիմաստը բացատրել նկարագրորեն կամ հոմանիշների օգնությամբ: Բնագրային օրինակները նպաստում են բառիմաստի նրբերանգների առավել ցայտուն արտահայտմանը՝ միաժամանակ ճշգրտելով բառի կիրառության ոլորտը: Երկու բառարաններում էլ առանց բառի արևմտահայերենին պատկանելը հավաստելու (առանց արևմտ. նշումի) բերվում են օրինակներ արևմտահայերեն բնագրերից՝ դրանով իսկ խոստովանելով, որ սովյալ բառը կամ բառիմաստը բնորոշ է արևմտահայերենին: Նույնիսկ ԱՀԲԲ-ի սուղ բնագրային օրինակներում հանդիպում են նման օրինակներ: Այսպես, ծրար բառի 2-րդ իմաստը՝ առհասարակ՝ թղթի մեջ փաթաթած կապոց, փաթեթ, որ ակնհայտորեն բնորոշ չէ արևելախայերենին, հաստատվում է Սիամանթոյից բերված օրինակով. «Ջեռքներուս մեջ ... քանի մը ծրար ցնցոտիներ, երկու ընկեր, մեռած գյուղն մը ուրիշ գյուղ մը կը քալիինք»:

Կամ միայն բառի արևելախայերենին ոչ բնորոշ մեմակ, առանձին իմաստը հավաստելու համար բերվում է հետևյալ օրինակը Պարոնյանից. «Հարյուր հոգով գլուխ հանելիք գործը միայն կուզե կատարել»:

Նույն մոտեցումը նկատում ենք նաև ընկերություն, տարագ բառերի դեպքում, որոնց իմաստների բացահայտման համար օրինակներ են բերվում Հ. Պարոնյանից և Ծ. Ծահնուրից:

Ակնհայտ է, որ ԱՀԲԲ-ի և մանավանդ ԺՀԲԲ-ի հեղինակները բառապաշարի արևմտահայերեն շերտը առանձնացնելիս չեն ցուցաբերել հետևողական մոտեցում և համապատասխան նշումով չեն շեշտել բառի արևմտահայ ծագում կամ երանգ ունենալը: Դա, մեր կարծիքով, ունի երկու բացատրություն: Առաջինն այն է, որ բառարանի կազմության ժամանակ հստակորեն տարբերակված չեն եղել և տեսականորեն չեն հիմնավորվել հայերենի երկու տարբերակների բառապաշարային առանձնահատկությունները և, երկրորդ, հեղինակները առաջնորդվել են հայերենի երկու տարբերակների բառապաշարների փոխհարստացումը ամրագրելու ազնիվ մղումով և արևմտահայերենից արևելախայերենին անցած ու կայուն գործածություն ունեցող բազմաթիվ բառեր համարել են ընդհանուր հայերեն բառեր, ուստի և դրանք բառարաններում բերվել են առանց նշումների: Այս ամենը, իհարկե, չի նպաստում հարցի գիտական պատշաճ ներկայացմանը, ուստի հայերենի՝ առաջիկայում կազմվելիք բառարաններում անհրաժեշտ է կատարել համապատասխան շտկումներ՝ արևմտահայերենի բառապաշարը հստակորեն ներկայացնելու համար:

**Р. К. САКАПЕТОЯН - Западноармянская лексика в новейших толковых словарях современного армянского языка.** - В статье рассматривается проблема отражения западноармянской лексики в новейших словарях современного армянского языка.

На основе анализа богатого языкового материала выявлены недостатки в выделении и семантическом и функциональном описании лексем западноармянского происхождения. Разработаны рекомендации по предупреждению подобных ошибок при составлении новых словарей современного армянского языка.